Հաշվետվություն

2025 թվականի ապրիլի 7-ից 11-ը Ավստրալիայի Համագործակցություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բրիզբեն, ապրիլի 7-ից 11-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Չափագրողների միջազգային ֆեդերացիա (FIG)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Չափագրողների միջազգային ֆեդերացիայի (FIG) աշխատանքային շաբաթին

5. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Աշխարհատարածական նորարարությունը,
- Մասնավոր հատվածի ներդրումը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների համար,
- Չափագրողների ստանդարտների ցանցին առնչվող նստաշրջան,
- Կլիման և կայուն զարգացումը,
- Անդամների ասոցիացիայի համաժողով (ներառյալ Տարածաշրջանային մարմինների համաժողովը),
- Կառավարությունների վճռորոշ դերը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին հասնելու համար,
- Կլիմա և աղետ,
- Չափագրողների միջազգային ֆեդերացիայի հանձնաժողովների նախագահների ընտրություն,
- Չափագրողների միջազգային ֆեդերացիայի գլխավոր ասամբլեա,
- Չափագրողների միջազգային ֆեդերացիայի հանձնաժողովների տարեկան ժողովներ,
- ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և մասնագիտական կրթության միջև կապը աշխարհատարածական աշխարհում,
- Ակադեմիական համաժողով,
- Տարածաշրջանային կարողությունների զարգացման հանդիպում - Աֆրիկայի տարածաշրջանային ցանց,
- Չափագրողների միջազգային ֆեդերացիայի կորպորատիվ անդամների հանդիպում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Չափագրողների միջազգային ֆեդերացիայի (FIG) աշխատանքային շաբաթվա շրջանակում Կադաստրի կոմիտեի ղեկավարը ներկայացրել է «Հայաստանում կադաստրային քարտեզների սխալների ուղղումը երկրատարածական տեխնոլոգիաների կիրառմամբ» խորագրով զեկույցը շնորհանդեսի տեսքով:

Սուրեն Թովմասյանը մանրամասն անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականին մշակված իրավական կարգավորումների հիման վրա կադաստրային քարտեզների սխալների հայտնաբերման և ուղղման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, ինչպես նաև կիրառվող նորարարական մեթոդներին: Հատուկ ուշադրություն է դարձվել երկրատարածական տեխնոլոգիաների՝ ներառյալ աշխարհագրական տեղեկատվական համակարգերի և հեռազննման նյութերի օգտագործման արդյունքում ձեռք բերված նշանակալի առաջընթացին:

Զեկույցին հաջորդել է բովանդակալից քննարկում, որի ընթացքում միջազգային գիտական հանրության ներկայացուցիչները հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանի փորձի նկատմամբ և առաջադրել են մասնագիտական հարցադրումներ:

Ներկայացված մեթոդաբանությունը ներառել է երկու հիմնական բաղադրիչ՝ օրենսդրական կարգավորումներ և համապատասխան ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրում: Այս մեթոդաբանությունն իրականացվել է 2021 թվականին մշակված նոր իրավական կարգավորումների հիման վրա, որը սահմանում էր կադաստրային քարտեզների ուղղման հստակ կարգ:

Կադաստրի կոմիտեի ղեկավարի կողմից ներկայացված զեկույցը տպագրվել է նաև FIG-ի գրախոսվող գիտական ամսագրում, ինչը վկայում է մեթոդաբանության գիտական հիմնավորվածության մասին:

Միջազգային ասպարեզում Հայաստանի փորձը ներկայացնելը նպաստում է պետության՝ տվյալ ոլորտում ունեցած նվաճումների միջազգային ճանաչմանը և գեոդեզիայի ու չափագրման ոլորտի միջազգային մասնագետների հետ մասնագիտական կապերի ամրապնդմանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը հանդիպում է ունեցել Չափագրողների միջազգային ֆեդերացիայի (FIG) նախագահ դոկտոր Դայան Դյումաշիեի հետ: Վերջինիս հետ քննարկվել է Կադաստրի կոմիտեի ակտիվ ներգրավվածությունը Չափագրողների միջազգային ֆեդերացիայի տարածական տեղեկատվության կառավարման, կադաստրի և հողերի կառավարման, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման և կառավարման հանձնաժողովներում:

Հանդիպման շրջանակներում կարևորվել է նաև Կադաստրի կոմիտեի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը առցանց հանդիպումներին, ինչպես

նաև ֆեդերացիայի կողմից առաջարկվող մասնագիտական թեմաներով հոդվածների ներկայացման աշխատանքներին:

Այնուհետև Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը հանդիպում է ունեցել Կադաստրի և հողերի կառավարման հարցերով 7-րդ հանձնաժողովի նախագահի հետ, և քննարկման ընթացքում կարևորվել են Կադաստրի կոմիտեի ակտիվ ներգրավվածությունը հանձնաժողովի աշխատանքներում և այդ հարցում հանձնաժողովի կողմից ցուցաբերած աջակցությունը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցությունը շարունակելու տարբեր ձևաչափերով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կոմիտեի ղեկավարը հանդիպում է ունեցել նաև «ESRI» ընկերության ներկայացուցչի հետ, որի ընթացքում քննարկվել են տարածական տվյալների համակարգի կրթական ծրագրերի մշակմանն առնչվող հարցեր: Երկուստեք առաջարկվել է մշակել հետագա համագործակցության ծրագիր:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 15.04.2025 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե
2
Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում N132-Ա 18.02.2025թ.
3
Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյան
4 Գործուղման վայրը Ավստրալիայի Բրիսբեն քաղաք
5 Գործուղման ժամկետները 07.04.2025 - 11.04.2025թթ.
6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2025 թվականի (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ
ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը էկոնոմ դաս		
	Ավիածառայության արժեք (դրամ)	1,045.00	1,045.00
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) Դոլար	159	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	62,574.45	
	Օրերի քանակ	4	
	Ընդամենը (դրամ)	250,297.80	250.30
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) Դոլար	90	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	35,419.50	
	Օրերի քանակ	5	
	Ընդամենը (դրամ)	177,097.50	177.10
Այլ ծախսեր	Ապահովագրական ծառայություն	4.05	4.05
Ընդամենը ծախսեր (դրամ)			1,476.45

Գլխավոր քարտուղար

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
գլխավոր հաշվապահ
14.04.25թ.